

ՄԵՆՔ՝ ՆԻԿՈԼԱՅ ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐՍ

Հայաստանում հազիվ թե գտնվեն մարդիկ, որ համարեն, թե 74 գրանցված կուսակցությունը մեզ խիստ անհրաժեշտ է, եւ որեւէ մեկի փակվելը կնշանակի քաղաքական դաշտից տվյալ գաղափարի բացակայություն: Ակնհայտ է, որ տասնյակների հասնող կուսակցություններ գոյություն չունեն, էլ չեն խոսում, որ դրանց գերակշիռ մասը գաղափարի կրող չէ, ուր մնաց տարածող լինի:

Որքան էլ օրենսդրորեն ու գործնականում կուսակցությունների դերը գնալով մեծանում է, միեւնույն է, կուսակցությունները մեզանում ինստիտուցիոնալ չեն դառնում: Նրանք հիմնականում որեւէ հայտնի մարդու գրասենյակ են հիշեցնում, որի հեռանալու դեպքում այն անմիջապես կփակվի: Ճշմարտության առաջ չմեղանչելու համար ասենք, որ ՀՀԿ-ն ամեն անգամ լիդերի փոփոխությունից հետո ավելի է հզորացել: Եւ թեպետ այն դարձել է ինստիտուցիոնալ կուսակցություն, բայց՝ միայն իշխանական, քանզի, եթե դառնա ընդդիմադիր, ապա դա կարող է նրա համար ճակատագրական լինել:

Այն, որ կուսակցությունների նման վիճակի համար իշխանությունները մեղավոր են՝ կասկածից վեր է: Բայց ընդդիմության գործը իշխանության սխալները ու նաեւ դրանք ուղղելու ճանապարհները մատնանշելն է, դրանով իսկ հանրությանը վստահեցնելը, որ, գալով իշխանության, նման սխալներ իրենք թույլ չեն տա, եղածն էլ կշտկեն: ՀԱԿ-ն իրեն հռչակել է միակ ու անփոխարինելի ընդդիմություն, ուստի, հասարակությունը հիմնականում նրա հետ է կապում իր սպասելիքները: Քիչ չեն խոսակցությունները, թե վերջապես՝ ի դեմս Հայ ազգային կոնգրեսի, ունենք ինստիտուցիոնալ ընդդիմություն, որն ավելի ու ավելի շատ կառույցներ է ստեղծում հանրապետության տարբեր բնակավայրերում ու նաեւ Երեւանում: Բայց եթե ՀԱԿ-ը գրասենյակներ բացի անգամ ամեն գյուղամիջում՝ դրանից ինստիտուցիոնալ չի դառնա, քանի որ լիդերի հեռանալու դեպքում կդադարի գոյություն ունենալուց:

Իսկ թե մեզանում որքանով է վիճակը մոտ դասական պայքարի տրամաբանությանը՝ փորձեցինք պարզել ՀԱԿ անդամ մի քանի կուսակցությունների տվյալների ընտրանքային ուսումնասիրությամբ: Նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանի «Ազատություն» կուսակցությունը 1997թ. հիմնադրվելուց հետո մինչ օրս, ըստ

«Կուսակցությունների մասին» օրենքի, պետք է առնվազն 6 համագումար արած լինեք: Մենք, համենայնդեպս, չմտաբերեցինք նման տեղեկատվություն, թեպետ նույն օրենքի պահանջն է, որ կուսակցություններն իրենց գործունեությունը ծավալեն հրապարակայնության սկզբունքով: Ըստ արդարադատության նախարարության համապատասխան կառույցի տվյալների կամ, ավելի ճիշտ, դրանց բացակայության՝ «Ազատություն» կուսակցության ղեկավար կազմում հիմնադրման օրվանից որեւէ փոփոխություն տեղի չի ունեցել: Իսկ 2003թ. վերագրանցումից հետո ներկայացրած ֆինանսական հաշվետվություններից երեւում է, որ կուսակցությունը 5 տարվա ընթացքում ծախսել է ընդամենը 141000 դրամ, ընդ որում, վերջին երեք տարում՝ զրո դրամ, զրո լումա: Բացի այդ, «Ազատություն» կուսակցության գոյության 12 տարիների ընթացքում երջանկահիշատակ Միքայել Նալբանդյանից ու ներկայումս էլ Հրանտ Բագրատյանից բացի, որեւէ «ազատություն սիրողի» անուն լսել է մեր հանրությունը: Մինչդեռ, ըստ օրենքի պահանջի, դրանց թիվը կուսակցությունում պետք է լինի առնվազն 2 հազար: Դարձյալ ըստ օրենքի, կուսակցությունը պետք է կառույցներ ունենա հանրապետության բոլոր մարզերում ու Երեւանում: Սակայն փաստաթղթերում նշված գրանցման ու նաեւ գործունեության հասցեներում պարզեցինք, որ այդտեղ կուսակցական գործունեություն չի ծավալվել: Ուղղակի զարմանալի է, թե այդպիսի պատասխանատու պաշտոններ զբաղեցնելուց հետո Բագրատյանի ինչի՞ն է պետք լինել գոյություն չունեցող կուսակցության լիդեր: Մենք էլ միամտաբար կարծում էինք, թե սեփական անձի հետ հոգնակի խոսում էին միայն Նիկոլայ II թագավորն ու Մացակ Պապյանի «կանայք»: Եթե մեր երկրում հնարավոր չէ պատշաճ կերպով պահել ընդդիմադիր կուսակցություն, ապա եկեք հայտարարենք այդ մասին, այլ ոչ թե աչքակապությամբ զբաղվենք՝ իբր ժողովրդավար երկիր ենք:

Ամեն քայլափոխի լսում ենք, որ ճիշտ ճանապարհը կուսակցությունների քանակի կրճատումն է, բայց ոչ որ չի ցանկանում սկսել իրենից: Թեպետ կուսակցական բնականոն գործունեություն ծավալելը կամ էլ գաղափարակից կուսակցությունների հետ համախմբվելը կապ չունի ո՛չ նավթային ու գազային խողովակների, ո՛չ էլ մոլորակի զլոբալ տաքացման հետ:



ԱՐԱՍ ԱՆՏԻՆՅԱՆ